"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 302-Լ

«25» փետրվարի 2025 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 562-Լ ՀՐԱՄԱՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝

հրամայում եմ.

Թատրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ««Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության դահլիճի սխամեն հաստատելու մասին» N 562-Լ հրամանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՐԱՄԱՆ

N 562-Լ

«21» հոկտեմբերի 2021 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՀԼԻՃԻ ՆՍՏԱՏԵՂԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Թատրոնի դահլիճի պարտերի 16-րդ շարքի 10-րդ և 11-րդ նստատեղերից, 17-րդ շարքի 1-ից մինչև 8-րդ նստատեղերից, ամֆիթատրոնի 6-րդ շարքի 1-ից մինչև 20-րդ նստատեղերից և օթյակների 2-րդ շարքի 1-ից մինչև 18-րդ նստատեղերից չի երևում թատրոնի ողջ բեմը, որն առաջացնում է հանդիսատեսի դժգոհությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Թատրոն) կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Սահմանել Թատրոնի դահլիճի նստատեղերի հետևյալ քանակն ու դասավորվածությունը.

1) Պարտեր՝ 1-ից մինչև 16-րդ շարք՝ 744 նստատեղ

2) Կառավարական օթյակ՝ հանդիսատեսի համար նստատեղեր չկան

3) Տնօրինական օթյակ՝ հանդիսատեսի համար նստատեղեր չկան

4) Ամֆիթատրոն՝ 5 շարք՝ 202 նստատեղ

5) Օթյակներ՝ 1-ից մինչև 18 օթյակ՝ 54 նստատեղ

6) Ընդամենը՝ 1000 նստատեղ

2. Թատրոնի առցանց տոմսերի վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջի առանձին բաժնում հրապարակմանը հաջորդող օրը:»

Հիմք՝ Թատրոնի տոմսային տնտեսության վարիչ Է. Շամյանի 2025 թվականի փետրվարի 25-ի զեկուցագիրը:

Թատրոնի տնօրեն՝ Կ. Դուրգարյան

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

ք. Երևան
«25» փետրվարի 2025 թ.